ԼՃԱՇԵՆԻ ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

Նորա Ենգիբարյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրություն ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ norayengibaryan@gmail.com
ORCID: 0009-0007-0508-1187
Հոդվածը ներկայացվել է 01.09.2023, գրախոսվել է 20.02.2024, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-313

Ամփոփում

Լճաշեն գյուղի պոլիկլինիկայի շինարարության ընթացքում բացվել են դամբարաններ, որոնց վերգետնյա կառույցները չեն պահպանվել: Դամբարանախցերն ուղղանկյուն են՝ երեք քարաշար և մեկ հիմնահողային պատերով: Նման կառուցվածքով բազմաթիվ խցեր կան Լճաշենի դամբարանադաշտում: Դամբարաններից մեկում կատարվել է կրկնակի թաղում: Երկրորդ թաղումից պահպանվել են մ.թ.ա. VI-IV դդ. թվագրվող երկու երկաթե դանակներ:

Դամբարանների հիմնական թաղումներին ուղեկցող իրերից պահպանվել են միայն խեցանոթներ: Հայտնաբերվել են տարբեր չափերի խոհանոցային և երկկանթ կճուճներ, անկանթ, ելուստավոր և միականթ սափորներ, անկանթ և կանթով գավաթներ, թաս ու քրեղան: Խեցանոթները սև և մոխրագույն են՝ զարդարված կանելյուրներով, գծազարդով, հասկանախշով, ակոսներով, ալիքագծով, կամարներով: Հայտնաբերված իրերը և դրանց հարդարանքի տարրերը նույնական են մ.թ.ա. IX-VIII դդ. դամբարանային համալիրների, Մեծամորի, Դվինի Կարմիր բլուրի՝ ուրարտական արշավանքների ժամանակ ավերված շերտերի նյութերի հետ: Ներկայացվող դամբարանները ժամանակագրվում են մ.թ.ա. IX դ. վերջ - VIII դ. սկզբով:

Բանալի բառեր՝ Հայաստան, Սևանա լճի ավազան, Լճաշեն, երկաթի դարաշրջան, քարարկղային դամբարան, խեցանոթներ, երկաթե դանակ:

Ներածություն

Լճաշենի հնավայրի մասին առաջին հիշատակությունը կապված է այժմյան գյուղի տարածքում գտնվող ուրարտական սեպագիր արձանագրության հետ, որը հայտնի է դարձել 1883 թ.: Անցյալ դարասկզբին՝ 1906-1908 թթ., Ե. Լալայանը Սևանի ավազանում պեղումներ կատարելու ժամանակ աշխատել է նաև Լճաշենի Քռեր տեղամասում[1]: Գյուղի և լճի ջրերից ազատված տարածքների դամբարաններում պարբերական պեղումները սկսվել են 1956 թ. Հ. Մնացականյանի կողմից (295 դամբարան)[2]: Դամբարանների փոքրաթիվ խումբ պեղել է Վ. Ավետյանը: Դամբարանադաշտում և գյուղի տարած-

[1] Լալայեան 1931, 105:
[2] Վարդանյան 2023, 10:

քում պեղումներ է կատարել նաև Լ. Պետրոսյանը: Նա պեղել է Լճաշեն գյուղի պոլիկլինիկայի շինարարության ժամանակ պատահականորեն բացված, տարբեր ժամանակաշրջաններով թվագրվող դամբարաններ (թվով՝ 223): Դրանցից ներկայացնում ենք երկուսը:

Դամբարաններ

Շինարարական աշխատանքների հետ կապված, դամբարանների վերգետնյա հատվածները, մասամբ էլ խցերը ավերվել էին[3]: Թաղումների դամբարանային կառույցները նույնական են՝ պատերից երեքը քարաշար են, մեկը՝ հիմնահողային[4]: Լճաշենի դամբարանադաշտում դա դամբարանային կառույցի տարածված ձև է[5]:

Դամբարան 01. մասնակի ավերված դամբանախցի վրա պահպանվել էր հարավային կողմի ծածկասալը (1,3x1,2 մ): Ուղղանկյուն հատակագծով քարարկղային դամբանախուցը (1,3x0,8x0,8 մ) ուղղված էր հյուսիս-հարավ առանցքով: Խցի երկայնական պատերը շարված էին միջին մեծության քարերով: Լայնական պատերից հարավայինը շարված էր մանր քարերով, հյուսիսայինը հիմնահողային էր: Դամբանախցի անխաթար մնացած հատվածից հայտնաբերվեցին խեցանոթներ, երկաթե դանակի մանր բեկորներ և ննջեցյալի գանգը: Խցի ավերված մասում բացվեցին հողի հետ խառնված խեցանոթների բեկորներ, մարդկային և կենդանական ոսկորներ[6]: Թաղմանն ուղեկցող գույքից հնարավոր է ներկայացնել անկանթ (նկ. 1/3, նկ. 2/3-5), երկկանթ (նկ. 1/5-7) կճուճներ, մեկ կանթով (նկ. 1/4) և ելուստկանթով (նկ. 1/8) սափորներ, գավաթ (նկ. 1/2), քրեղան (նկ. 1/1):

Դամբարան 04. խցի ուղղվածությամբ և ձևով կրկնում է նախորդին, ծածկասալերը և հարավային պատը բացակայում էին: Դամբարանախուցը օգտագործվել է երկու անգամ, կատարված թաղումների միջև առկա էր հողի մոտ 10 սմ միջնաշերտ: Վերին թաղմանն ուղեկցող իրերից են խեցեղենի մանր բեկորներ, երկաթե երկու դանակ (նկ. 2/1, 2): Միջնաշերտի տակ կատարված թաղումից պահպանվել էին երկու ննջեցյալի ոսկորների մնացորդները, տարբեր չափերի երկու կճուճ (նկ. 2/7, նկ. 3/3), կանթով թաս (նկ. 3/1), գավաթներ (նկ. 3/2, 4-6), անկանթ (նկ. 2/8) և միականթ սափորներ (նկ. 2/6, նկ. 3/7-9):

04 դամբարանի վերին թաղումը. այս թաղմանն ուղեկցող իրերից պահպանվել են երկու դանակ: Դրանցից մեկը դաստակավոր է, ուղիղ

---

[3] Շնորհակալություն ենք հայտնում հնագետ Լ. Պետրոսյանին նյութը տրամադրելու համար: Պեղումները ներկայացնող նրա հաշվետու հոդվածում տրված են միայն դամբարանների նկարագրությունները (Պետրոսյան 1993, 41-42): Դամբարանները ներկայացվում են ըստ դաշտային համարակալման:

[4] Կարծում ենք՝ դամբարան 04-ի հյուսիսային ավերված պատը նույնպես եղել է հիմնահողային:

[5] Պետրոսյան 2018, 69-92:

[6] Մարդաբանական և կենդանաբանական նյութերի մասին տվյալներ չկան:

շեղբով, պահպանվել է դաստապանն ամրացնող գամը (նկ. 2/2): Դանակը ձևով կրկնում է զարգացած երկաթի ժամանակաշրջանի նմուշները, որոնք Սևանի ավազանում հայտնի են Նորատուսից, Կարճաղբյուրից, Աստղաձորից, Շեյթան դաղից (Լոռի)[7]:

Երկրորդ դանակն այն տարբերակներից է, որոնց դաստակը շեղբի շարունակությունն է կազմում: Դանակը նույնատիպ օրինակներից տարբերվում է դաստակին բացված ձվածիր բացվածքով (նկ. 2/1): Դաստակին տարբեր ձևի և մեծության բացվածք ունեցող այս դանակների երկարությունները խիստ տարբերվում են (15 սմ-ից մինչև 52 սմ)[8]: Նման դանակներ հայտնի են Բերդից (չորս), Ջրառատից (երեք), Մուսիերիից (երկու), Թեղուտից, Աչաջրից, Ախթալայից, Ջուջևանից[9]: Դանակների այս տարբերակը լայն տարածում չունի, հիմնականում հայտնաբերվել է Հայաստանի հյուսիսային շրջաններից: Այս հանգամանքը ժամանակին Ս. Եսայանին հիմք է տվել դրանք համարել տեղական արտադրանք Հայաստանի հյուսիսային շրջանների համար[10]: Դանակներն ուղեկցող այլ իրերի բացակայության պարագայում նմանօրինակ նյութերով թվագրվում են մ.թ.ա. VI-IV դդ.-ով:

Քննարկվող դամբարանների հիմնական թաղումներից հայտնաբերված խեցեղենը սև և մոխրագույն է կամ ունի այդ գույների երանգներ:

Կճուճներ՝ լայնաբերան, դեպի վեր լայնացող (նկ. 2/5, 7) կամ երկկոն իրանով (նկ. 1/3, 3/3), կարճ վզով, եզրը կլորացող (նկ. 2/3, 4) կամ քիչ դուրս ճկված (նկ. 1/2, 2/5, 7, 3/3) շուրթով անոթներ են: Հարդարված են մեկ կամ երկու շարք հատիկաշար և ալիքագիծ գոտիներով: Սևանի ավազանի երկաթեդարյան նյութերի մեջ նման զարդագոտիով կճուճների օրինակները շատ չեն (Հայրավանք, Ծովազարդ, Կարճաղբյուր):

Կճուճների՝ ոչ լայն բերանով, երկկոն իրանով տարբերակը (նկ. 1/3, նկ. 3/3) ևս հարդարանքի նույն տարրերով է, միայն թե նմուշներից մեկի զարդագոտին լրացված է չորս գնդաձև ելուստներով: Լճի ավազանից անոթի նման օրինակներ հայտնի են Հայրավանքից[11]:

Երկկանթ կճուճներ. ձգված (նկ. 1/7) կամ ուռուցիկ (նկ. 1/5, 6) իրանով, շատ կարճ վզով, կլորացող եզրով քիչ դուրս թեքված շուրթով անոթներ են: Իրանի ուռուցիկ մասում տեղադրված են կիսաշրջանաձև կանթերը, մեկ օրինակի վրա դրանք ելուստավոր են (նկ. 1/6): Անոթները հարդարված են զուգահեռ գծերով և իրանի կենտրոնով անցնող ալիքագծով: Սևանի ավա-

[7] Morgan 1889, fig. 121/1,4, Yengibaryan 2002, pl. XV/1,8, Yengibaryan 2019, fig. 10/26.

[8] Мнацаканян, Тирацян 1961, 71, Չիլինգարյան 1971, 69:

[9] Morgan 1889, 131, fig. 125, Мнацаканян, Тирацян 1961, таб. 1, Мартиросян 1961, рис. 38б, Есаян 1969, 288, таб. II/5, 6, Չիլինգարյան 1971, տախտակ 1/1, Мартиросян 1974, рис. 89а/1, Есаян 1976, таб. 138/4:

[10] Есаян 1969, 288.

[11] ՀՊԹ գույք N 2552/87, 2601/112:

զանի հուշարձաններից երկկանթ կճուճները հայտնի են Ծովազարդի, Հայրավանքի, Կարճաղբյուրի դամբարաններից[12]: Խեցանոթների այս տեսակը տարածված և հայտնի է Արտաշավանի, Շիրակավանի, Կառնուտի, Ջրափիի, Արթիկի դամբարաններից[13]:

Սափորներ. երեք տարբերակով են՝ առանց կանթի, ելուստ-կանթով և միականթ: Անկանթ սափորից պահպանվել է իրանի վերին գնդաձև մասը, ունի կարճ վիզ, դուրս թեքված շուրթ (նկ. 2/8): Զարդարված է գծապատկեր հասկանախշով կամարներով և վզի տակ ալիքագիծ ու ակոսաշար գոտիներով: Սափորների այս տարբերակի նման օրինակներն առկա են Կարճաղբյուրի, Քուչակի, Արտաշավանի դամբարանային նյութերում[14]:

Ելուստ-կանթով սափորը ստորին մասում դեպի վեր լայնացող, վերին մասում ուռուցիկ իրանով, կարճ վզով, դուրս թեքված, կլորացող շուրթով անոթ է, ուսին՝ ելուստաձև, անցքավոր կանթ (նկ. 1/8): Սափորի իրանի վերին մասում ելուստ-գոտիների մեջ պատկերված են ակոսագծերով եզերված թեք հատիկաշար և իրար մեջ ներգծված խազագիծ, կամարաձև նախշեր: Նման ելուստ-կանթով սափորներ հայտնի են Հայրավանքից, Արտաշավանից, Քուչակից[15]:

Երրորդ տարբերակը կազմող միականթ սափորներն ուռուցիկ (նկ. 1/4) կամ երկկոն (նկ. 2/6, նկ. 3/7-9) իրանով, գլանաձև վզով, լայնացող բերանով, եզրը կլորացող շուրթով անոթներ են: Կանթերը շուրթից միանում են իրանի վերին մասին: Սափորներից մեկը հարդարված է իրանի ստորին մասով անցնող զույգ խորակոս և ուսին արված խազագծերով եզերված հասկանախշ գոտիներով (նկ. 1/4): Մյուս չորսը զարդարված են կանելյուրներով, երեքը ուսի վրա ունեն նաև ակոսագծեր (նկ. 2/6, նկ. 3/7, 8): Որպես խեցանոթների հարդարանքի տարր՝ հասկանախշը և կանելյուրները հիմնականում հանդիպում են մ.թ.ա. IX-VIII դդ. սկզբի խեցանոթների վրա[16]: Կանելյուրազարդ, միականթ սափորների զուգահեռներ կան Մեծամորի, Սիսիանի, Անգեղակոթի, Շիրակավանի դամբարաններում[17]:

---

[12] ՀՊԹ գույք № 2552/85, 3024/21. Մնացականյան 1952, նկ. 4:

[13] Хачатрян 1979, погр. 218, 221, 223, 420, Աւետիսեան և այլք 1998, աղ. ԺԲ/19. Թորոսյան և այլք 2002, աղ. LXVI/4, LXX/6, LXXVI/20-22, Badalyan, Avetisyan 2007, 151, Pl. I/1-3, Խաչատրյան և այլք 2019, աղ. 3/3, 10/3:

[14] Петросян 1989, таб. 65/3, 66/2, Աւետիսեան և այլք 1998, աղ. ԺԲ/18, Yengibaryan 2002, pl. IV/9, Ավետիսյան, Ավետիսյան 2006, աղ. 33/5, Պետրոսյան 2016, I/3:

[15] ՀՊԹ գույք N 2552/82, 2601/111, Петросян 1989, таб. 65/1, 2, Աւետիսեան և այլք 1998, աղ. Ե/5, ԺԲ/5, Պետրոսյան 2016, աղ. V/4:

[16] Եսայան 1967, աղ. XIII/12, 13, 15-18, Խանզադյան և այլք 1973, նկ. 61-63, 122-125,127, Ենգիբարյան 2010, աղ, I/3, աղ. II/4, աղ. IV/9:

[17] Խանզադյան և այլք 1973, աղ. XXXVI/1, Թորոսյան և այլք 2002, LXVII/3, 5, Xnkikyan 2002, XLVII/ 6, XLIX/4, LIV/27:



Նկ. 1. 1-8՝ դամբարան N 01, 1. քրեղան, 2. միականթ գավաթ, 3. կճուճ, 4. միականթ սափոր, 5-7. երկկանթ կճուճ, 8. ելուստ-կանթով սափոր



Նկ. 2. 1-5՝ դամբարան N 01, 6-8՝ դամբարան N 04, 1-2 երկաթե դանակ, 3-5 կճուճ, 6. սափոր՝ միականթ, թերի, 7. կճուճ, 8. սափոր



Նկ. 3. դամբարան N 04, 1. թաս, 2-3. կճուճ, 4-6. միականթ գավաթ, 7-9. միականթ սափոր

Գավաթներ. երկու տարբերակով են՝ կանթով և անկանթ: Անկանթը երկկոն իրանով, հարթ հատակով, կլորացող եզր ունեցող ուղիղ շուրթով անոթ է (նկ. 3/2): Գավաթի իրանի կենտրոնով անցնում է հատիկաշար, իսկ վզից իրանին անցման մասում ելունդագոտիներ են: Անոթի նման օրինակ գտնվել է Աստղաձորի N 2 դամբարանում[18]:

Երկրորդ տարբերակը կազմող կանթավոր գավաթները չորսն են. հարթահատակ, լայնացող կամ ուռուցիկ իրանով, շուրթերը կլոր, դուրս ծալված: Կանթերը շուրթից միանում են իրանի կենտրոնին (նկ. 1/2, 3/4, 5) կամ վերին մասին (նկ. 3/6): Կանթերից մեկը ելուստավոր է (նկ. 1/2): Միականթ գավաթները երկաթեդարյան տարածված խեցետեսակ են, ներկայացվող օրինակներն իրարից տարբերվում են անոթի ձևով՝ դեպի վեր աստիճանաբար լայնացող են կամ գնդաձև իրանով: Զարդարված են ակոսագծերով, ելունդագոտիով, մեկ օրինակը՝ նաև կանելյուրներով: Այս գավաթների զուգահեռները մ.թ.ա. IX-VIII դարերով թվագրվող դամբանային համալիրներում են (Մեծամոր, Էլառ, Շիրակավան, Զորաքարեր)[19]:

Հայտնաբերված խեցեղենի վերջին տեսակը մեկական օրինակով ներկայացված թասն ու քրեղանն են: Թասը կիսագնդաձև իրանով, ներս թեք-

[18] ՀՊԹ գույք N 1908/24:

[19] Խանզադյան և այլք 1973, նկ. 168, Խանզադյան 1979, աղ. XX/1, Թորոսյան և այլք 2002, LXXI/15, LXXV/7, LXXIV/14. Xnkikyan 2002, pl. LIII/32, 33:

ված շուրթով է, ուսի վրա ունի իրանին զուգահեռ, անցքավոր կանթ (նկ. 3/1): Սույն թասը ձևով նման է Մեծամորից հայտնաբերված ակոսազարդ իրաններով համաժամանակյա նմուշներին[20]:

Քրեղանը փռված իրանով, ընդգծված կողով, դեպի ներս թեք կտրված շուրթով խեցանոթ է (նկ. 1/1): Նման օրինակներ առկա են Լոռի բերդի, Ջրափիի դամբարանների նյութերում[21]:

Եզրակացություններ

Դամբարաններից հայտնաբերված իրերը և դրանց հարդարանքի տարրերն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն մ.թ.ա. IX-VIII դդ. դամբարանային համալիրներում: Այս դամբարանների խեցանոթները և դրանց հարդարանքի տարրերը նույնական են նաև Մեծամորի, Դվինի, Կարմիր բլուրի քաղաքային թաղամասի (նախաուրարտական) հրդեհված շերտերի նյութերի հետ[22]: Այս երեք հուշարձանները հրդեհվել են մ.թ.ա. 782 թ. Արգիշթի Ի-ի կողմից Արարատյան դաշտը գրավելու ընթացքում:

Դամբարանների թվագրության ստորին սահմանը համընկնում է ուրարտական արշավանքների հետ: Տվյալ ժամանակահատվածում ուրարտացիների ներկայությունը Սևանա լճի այդ հատվածում փաստում է նաև տեղում պահպանված ժայռափոր արձանագրությունը[23]:

Արձանագրությունում արքայի հայրանվան բացակայությունը խնդիր չի հարուցում, քանի որ տեքստը բովանդակությամբ համընկնում է Արգիշթի Ի-ի տարեգրությունում և կրկնօրինակում նկարագրված հինգերորդ տարում կատարված դեպքերին (մ.թ.ա. 782 թ.)[24]: Դեպի հյուսիս կատարած արշավանքի ժամանակ Արգիշթին գրավել է նաև ներկայիս Լճաշենի տարածքը, հավանաբար նաև ամրոցը[25]: Արձանագրությունը Լճաշեն գյուղում միակը չէ, եղել է նաև երկրորդը, որի մասին վկայում է Ե. Լալայանը[26]: Անցյալ դարասկզբին նա գյուղացիներից մեկի բակում տեսել է գուռ դարձրած արձանագիր քարը՝ եզրերին պահպանված սեպանշաններով: Սևանի ավազանի բնակավայրերից Լճաշենը առայժմ միակն է, որտեղից հայտնի են ուրարտական երկու արձանագրություն:

---

[20] Խանզադյան և այլք 1973, աղ. XXXVI/ 5, XXXVII/8, 9:

[21] Դեվեջյան 2006, նկ. 67/3, 5, Խաչատրյան և այլք 2019, աղ. 10/6:

[22] Сорокин 1958, рис. 6/2, 7/4-7, Խանզադյան և այլք 1973, նկ. 54-56, 61-65, Кушнарева 1977, рис. 33/1-3, 35/1-3, 5, 6, 36/1, 3:

[23] Меликишвили 1960, 130, Арутюнян 2001, 180, Salvini 2008, A 8-11.

[24] Меликишвили 1960, 127, $II_{25-32,}$, 128, A $2_{1-13.}$, Арутюнян 2001, 173, $II_{25-32,}$, 174 A $2_{1-13.}$, Salvini 2008, A 8-3 $II_{25-32.}$, A 8-1 $1.d_{1-13.}$.

[25] Ամրոցում կատարված փոքրածավալ պեղումները բավարար հիմքեր չեն տալիս այս հարցին պատասխանելու համար:

[26] Լալայեան 1931, 105:

Դամբարանները լրացնում են Լճաշեն հնավայրից հայտնի երկաթի շրջափուլի սակավաթիվ նյութերի շարքը:

Օգտագործված գրականություն

Աւետիսեան Պ., Ենգիբարեան Ն., Սարգսեան Գ. 1998, Հայաստանի նորայայտ հնագիտական յուշարձաններ, Արտաշաւանի դամբարանադաշտը, Հանդէս ամսօրեայ, թիւ 1- 12, էջ 193-248:

Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Երևան, ԵՊՀ հրատ. 395 էջ:

Դեվեջյան Ս. 2006, Լոռի բերդ, II (միջին բրոնզ), Երևան, «Գիտություն», 426 էջ:

Ենգիբարյան Ն. 2010, Կարմիր բերդ դամբարանադաշտի 1991 թ. պեղումները, «Խալդյան զորությամբ» հոդվածների ժողովածու՝ նվիրված Բ. Պիոտրովսկու ծննդյան 100-ամյակին, Երևան, «Գիտություն», էջ 132-151:

Եսայան Ս. 1967, Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, II, Երևան, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության N 1 տպարան, 115 էջ:

Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ. 2002, Հին Շիրակավան (1977-1981 թթ. պեղումների արդյունքները), Երևան, «Գիտություն», 259 էջ:

Լալայեան Ե. 1931, Դամբանների պեղումները Սովետական Հայաստանում, Երևան, Մելքոնյան ֆոնդի հրատ, 240 էջ:

Խաչատրյան Հ., Եգանյան Լ., Պետրոսյան Լ., Ֆուրտվանգլեր Ա., Մաուերման Դ. 2019, Ջրափիի դամբարանադաշտի պեղումները, Գիտական աշխատություններ, Գյումրի, էջ 161-193:

Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է. 1973, Մեծամոր (ուսումնասիրություն 1965-1966 թթ. պեղումների տվյալներով), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 214 էջ:

Խանզադյան Է. 1979, Էլառ-Դարանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 188 էջ:

Հայաստանի պատմության թանգարան (ՀՊԹ), գույք N 2552/82, 85, 87, գույք N 2601/ 12, 111, գույք N 3024/21:

Մնացականյան Հ. 1952, Հնագիտական պեղումներ Սևանա լճի ցամաքած տերիտորիայում, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., N 8, էջ 99-111:

Չիլինգարյան Ս. 1971, Վաղ հայկական հուշարձաններ Ջուջևանի դամբարանադաշտում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, էջ 69-73:

Պետրոսյան Լ. 1993, Լճաշենի պեղումները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները), I, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 41-48:

Պետրոսյան Լ. 2016, Քուչակ-I դամբարանադաշտի մշակույթը (մ.թ.ա. IX-VI դդ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, էջ 254-269:

Պետրոսյան Լ. 2018, Լճաշենի դամբարանադաշտը, I, Երևան, ՀԱԻ հրատ., 416 էջ:

Վարդանյան Բ. 2023, Լճաշենի ամրոցն ու դամբարանադաշտը, հ. I, Երևան, ՀՊԹ, 304 էջ:

Арутюнян Н. 2001, Корпус урартских клинообразных надписей, Ереван, «Гитутюн», 542 с.

Есаян С. 1969, Могильник раннеармянского времени в поселке Берд Шамшадинского района, Историко-филологический журнал, N 4, с. 285-291.

Есаян С. 1976, Древняя культура племен северо-восточной Армении (III-I тыс. до н.э.), Ереван, изд. АН Арм. ССР, 270 с.

Кушнарева К. 1977, Древнейшие памятники Двина, Ереван, изд. АН Арм. ССР, 110 с.
Мартиросян А. 1961, Город Тейшебаини, Ереван, изд. АН АрмССР, 158 с.
Мартиросян А. 1974, Аргиштихинили, Археологические памятники Армении, N 8, Урартские памятники, вып. I, Ереван, изд. АН Арм. ССР, 176 с.
Меликишвили Г. 1960, Урартские клинообразные надписи, Москва, изд. АН СССР, 504 с.
Мнацаканян А., Тирацян Г. 1961, Новые данные о материальной культуре древней Армении, Известия общ. наук, N 8, Ереван, с. 69-83.
Сорокин В. 1958, Следы древнейшего поселения у Кармир-блур, Советская археология, N 2, с. 149-163.
Хачатрян Т. 1979, Артикский некрополь, каталог, Ереван, изд. Ереванского университета, 403 с.
Петросян Л. 1989, Раскопки памятников Кети и Воскеаска (III - I тыс. до н.э), Ереван, изд. АН Арм. ССР, 178 с.
Badalyan R., Avetisyan P. 2007, Bronze and Early Iron Age Arcahaeological Sites in Armenia, I, Mt. Aragats and its Surronding Region, Oxford, 320 p.
Morgan J. de. 1889, Mission Scientifque au Caucase, tome premier, Paris, Ernest Leroux, editteur, 231 p.
Salvini M. 2008, Corpus dei Testi Urartei, volume I, Le Iscrizioni su Pietra e Roccia, I Tessti, Documenta Asiana, VIII, Volume Primo, Roma, Pubblicazioni Dell'Instituto di Studi Sulle Civilata' Dell' Egeo e del Vicno Oriente del Consiglio Nazionale delle Ricerche, 653 p.
Xnkikyan O. 2002, Syunik' During the Bronze and Iron Agis, Barrington, Mayreni Publishing, 137 p.
Yengibaryan N. 2002, The Graves of the Urartian Period of Karchaghbyur, The North-Eastern Frontier, Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, ed. by R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, Roma, Pubblicazioni Dell' Instituto di Studi Sulle Civilata' Dell'egeo E Del Vicino Oriente Del Consiglio Nazionale Della Ricerche, p. 417-454.
Yengibaryan N. 2019, Middle Iron Age tombs from Noratus (Sevan region, Armenia), Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies, XIII/1, Oxford, p. 1-43.

ЛЧАШЕНСКИЕ ПОГРЕБЕНИЯ ЖЕЛЕЗНОГО ВЕКА

Нора Енгибарян

Резюме

Во время строительства здания поликлиники в селе Лчашен были выявлены погребения, наземные строения которых не сохранились. Погребальные камеры имеют прямоугольную форму, три стены – каменные, одна – грунтовая. В одном из погребений было осуществлено повторное захоронение. Во втором захоронении сохранились два железных ножа, которые датируются VI-IV вв. до н.э.

Из сопровождающих предметов основных захоронений сохранилась только керамика. Была обнаружена различная кухонная утварь: горшки, двуручные и

безручные кувшины и кубки, а также миски разных размеров. Вся керамика черного и серого цветов украшена каннелюрами, линиями, канавками, арками, колосовидными и волнистыми узорами. Обнаруженные предметы и элементы украшения идентичны погребальным комплексам IX-VIII вв. до н.э. (Айраванк, Цовазард, Карчахбюр, Арташаван, Ширакаван, Карнут, Мецамор) и материалам слоев Мецамора, Двина, Кармир Блура, разрушенных в период урартских походов.

Представленные погребения датируются концом IX – нач. VIII вв. до н.э.

Ключевые слова – Армения, бассейн озера Севан, Лчашен, железный век, каменный ящик, керамика, железный нож.

THE IRON AGE TOMBS OF LCHASHEN

Nora Yengibaryan

Abstract

During the construction of the Lchashen village polyclinic tombs were discovered the surface constructions of which were not preserved. The burial chambers are rectangular, with three walls layed with stone, and one cut in earth. This type of chamber structure is common in the Lchashen cemetery. In one of the tombs a secondary inhumation was conducted. Two knives of the 6-4th centuries BC were preserved from that inhumation. Items accompanying primary inhumations in the tombs only include pottery: kitchen pots and pots with two handles of different sizes, jugs with one protrusion or no handle, beakers with one or no handle, a bowl, and a deep bowl. The vessels are black and grey in colour, adorned with flutings, arches, wavelines, lines, and grooves.

The discovered items, and the elements of their decoration are identical with the 9-8th centuries BC items found in cemetery complexes and layers of Metsamor, Dvin, Karmir Blur from the strata destroyed by the Urartian invasions. The presented tombs date back from the end of the 9th until the beginning of the 8th centuries BC.

Key words – Armenia, the basin of lake Sevan, Lchashen, Iron Age, stone cist, pottery, iron knife.